

«Երևան» կինոթատրոն

«Երևան» կինոթատրոնն ծրագրի իրականացումը սկսվեց ֆիլմերի ցուցադրության համար անհրաժեշտ միջազգային չափորոշիչներին համապատասխանող, ժամանակակից և բարձրորակ տեխնիկայի տեղադրմամբ Շուշիի քաղաքային ակումբի դահլիճում: Վերանորոգվել է կինոդահլիճի տանիքն ու հատակը, կատարվել է ներքին և արտաքին լուսավորում, ձևավորվել է շենքի ճակատն ու բեմը: Այժմ շարունակվում է կինոթատրոնի բարեկարգումը. հաջորդաբար իրականացվելու է կինոթատրոնի ջեռուցման նախագիծը, գլխավոր մուտքի և այլ հանգույցների վերանորոգումը:



Կինոթատրոնը բացվել է Շուշիի ազատագրման 15 ամյակի տոնակատարություններին Հիմնադրամի միջոցառումների շրջանակներում Արման Մանարյանի «Մասունցի Դավիթ» նոր մուլտիպլիկացիոն կինոնկարի պրեմիերայով: Կինոթատրոնը ստացել է «փառատոնային» կարգավիճակ: Կինոթատրոնը կծառայի նաև որպես միջոցառումների անցկացման վայր:



«Երևան» կինոթատրոնն ծրագրի նպատակն է քաղաքում հիմնադրել ժամանակակից կինոթատրոն՝ քաղաքի բնակչության և զբոսաշրջիկների համար ժամանցի լրացուցիչ հնարավորություն ստեղծելու, Ստեփանակերտից և Շուշիին հարակից այլ բնակավայրերից այցելուներ գրավելու, փոքր ու միջին բիզնեսը խթանելու և մշտական աշխատատեղեր ստեղծելու նպատակով: Ի լրումն, Հիմնադրամի և «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի միջև համագործակցության շնորհիվ կինոթատրոնն ունի հարուստ ֆիլմադարան հայկական և հայ ռեժիսորների ֆիլմերի մշտական ցուցադրությամբ:

